

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզովով:

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ է Ք օ Ն № 253.

Նույն Արեւմտեան, Ռուսիոյ եւ Գեորգի Միքայելեան Միջազգային խորհրդի վերջ-
տով յայտարարութիւնը՝ թանգազին եղբոր, իսկ վերջինս երբ՝ անհրաժեշտ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼԷԳՍԱՆԴՐԵԱՆ ԽԱՆՈՒՍԵԱՆՑԻ

Վաղածամ մահը, որ տեղի ունեցաւ ամսին 23-ին Արաւթումանի ամառանոցում,
խնդրում են ազգականներին և բարեկամներին մասնակցելու ամսին 25-ին, երեկոյեան
ժամը 7-ին, Մոզուս ս. Գեորգի եկեղեցու գաւթում կատարվելիք ամբողջին:
Թաղման համար առանձին կը յայտարարվի:

1—1

Եղիաթէք Աւետեան Միքայել եւ Նիկողայոս Արեւմտեան խախտեալները խո-
րին վշտով յայտնում են՝ առաջինը՝ իրանց սիրելեան որդու, իսկ վերջինս երբ՝

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼԷԳՍԱՆԴՐԵԱՆ ԽԱՆՈՒՍԵԱՆՑԻ

Վաղածամ մահը, որ տեղի ունեցաւ ամսին 23-ին Արաւթումանի ամառանոցում և
խնդրում են ազգականներին և բարեկամներին մասնակցելու ամսին 25-ին, երեկոյեան
ժամը 7-ին, Մոզուս ս. Գեորգի եկեղեցու գաւթում կատարվելիք ամբողջին:
Թաղման համար առանձին կը յայտարարվի:

1—1

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Կոտուրայից հետո մնացած. Ներքին Տե-
ստիքիւն. Նամակ Վաղարշապատից. Ներքին
լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՏԻՔԻՆ. Պատերազմի
շուրջը. Նամակ Պարսկաստանից. ՀԵՆՐԻԿԻՆ
ՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՆ
ԲԱՆԱՍԻՆ. Բոսֆորի ուրուականը:

ԿՈՒՆՏԱՆՍՏԱՆԻ ԶԵՆՈՒՄՆԱՅԸ

Փոքր-Ասիան, թէև շատ մօտ է Եւրո-
պային և թէև Ասիայի ամենամեծաւոր
մասն է համարվում արևմտեան աշխարհի
համար, այնուամենայնիւ նա շատ քիչ է
ուսումնասիրված և նրա մեծագոյն մասը
գեո. անմատչելի է կանոնաւոր հաղոր-
դակցութեան և ազատ երթևեկութեան
համար:

Այժմ, երբ մի քանի ուղղութիւններով
անցան երկաթուղիական գծեր, փոքր ինչ
աւելացան երկրի խորքերի յարաբերու-
թիւնները դրսի աշխարհի հետ: Եւ ան-
կասկած, աւելի ևս կընդարձակվին, երբ
կիրաւորվի Միջագետքի կամ Բաղդադի
երկաթուղու գիծը իր ճիւղաւորութիւն-
ներով:

Փոքր Ասիան աւելի քիչ է ընկել եւ-
րօպական առևտրի և արհեստի ազդեցու-
թեան տակ, քան հեռաւոր տեղերի, Աֆ-

րիկայի և կղզիների երկրները, որոնց
հետ Եւրօպան և Ամերիկան ունեն աւելի
սերտ հաղորդակցութիւն:

Ինչպէս յայտնի է, Գերմանիան վերջին
տարիներում փորձեց ծառայեցնել Փոքր
Ասիան իր սեփական անտեսական շահերի
համար՝ և բաւական աջողութիւն ունե-
ցաւ: Միւս պետութիւններն էլ՝ Աւստ-
րիան, Ֆրանսիան, Անգլիան, Իտալիան
և Ամերիկան աշխատում են վաճառա-
նոցներ շահել իրանց արդիւնաբերու-
թեան ապրանքների համար: Փոքր Ասիան
ապրանքաւորում է իր մէջ անտեսական
զարգացման համար մի մեծ ասպարէզ
ապագայում:

Նորագոյն ծրագրերից մէկը պէտք է
համարել Իտալիայի Աշխարհագրական ըն-
կերթութեան կազմած յատուկ արշաւա-
նումը, որ ուղեորվում է ուսումնասի-
րելու Փոքր-Ասիայի անտեսական և ա-
ռևտրական հանգամանքները: Այս տարի
արդէն ուղարկված էր Անատոլիա ու-
սումնասիրութեան նպատակներով ծովա-
յին լէյտենանտ Վանուսէլլի: Եւ այցե-
լի է Փոքր-Ասիայի գլխաւոր քաղաքները
և նաւահանգիստները, եղել է նաև Կով-
կասում, ուր այցել է նա թիւրքայից
Կարաուրզանի վրայով: Վանուսէլլի շատ
արդարացի կերպով նկատում է, որ Ա-

սիական թիւրքայի և Կովկասի մէջ յա-
րաբերութիւններն այնքան քիչ են զար-
գացած, որ կարելի է նրանց համարել
գոյութիւն չունեցող: Հաղորդակցութեան
ճանապարհները երկու երկրների մէջ
շատ անսխիթաբար կիճակի մէջ են:

Արդարև, զարմանալ կարելի է, թէ որ
աւտիման Կովկասը կտրված է Փոքր-Ա-
սիայից: Միթէ Եւրօպայում պետական
սահմանադժեքը խանգարում են առև-
տրական յարաբերութիւններն: Ամենին
ոչ: Միթէ Ֆրանսիայի և Գերմանիայի
մէջ, որոնք երկար տարիներով նոյն իսկ
թշնամութիւն ունէին միմեանց հետ,
մարդկանց երթևեկութիւնը և առևտրա-
կան յարաբերութիւնները զարգարում էին:
Միթէ ամեն օր պետութիւնից պետու-
թիւն չեն անցնում հազարաւոր մարդիկ
և միլիոններ արժողութիւն ունեցող ապ-
րանքներ:

Անշուշտ, եթէ մեր հարեան թիւրքա-
կան պետութիւնը աւելի զարգացած և
քաղաքակրթված մի երկիր լինէր, վաղուց
մեր և նրա մէջ կատարվում կը լինէին
աւելի սերտ յարաբերութիւններ և մենք
սկսանաւոր չէինք լինի այն դրութեան,
որ ներկայումս գոյութիւն ունի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՏԻՔԻՆ

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

Օգոստոսի 19-ին
Ներկայ 1904 թվականը խիստ անբարեկա-
շու է իր արդիւնաւորութեամբ: Այս տարվա
ցորենը շատ նուազ է թէ քանակութեամբ և
թէ որակով: Համանման չափի «ըղաղը» այս
տարի կէս օ-ով պակաս ցորեն է արտա-
դրում, քան անցեալ տարի, այն էլ վտիտ և
նուազ տեսակի:

Սաղորդի այգիներն էլ շատ արդիւնը չեն
խոստանում: Ծառայատուկներն էլ մեծ չափով
ենթարկվեցին ձմեռվայ ցրտահարութեան:

Այս աննպաստ դրութիւնը կարելի է վե-
րագրել գլխաւորապէս այն հանգամանքին, որ
այս տարի մեղանում տարօրինակ և չը տեսն-
ված ցորեն եղանակներ եղան, զարմանք ան-
կանոն կերպով տեղացին անձրևներ՝ ցրտա-
շունչ հողմերի հետ: Այս պատճառով էլ այս
տարի մեղանում աւառը այնքան էլ սովորյալ
և կիզիչ չէր, ինչպէս յատուկ է Արարատեան
դաշտին:

Արքայազն Մուրադը նոյն իսկ կայանաւոր-
ված էր Արդու-Աղիւի հրամանով:

Արքայազն Մուրադը զաղտնի բանակցում
էր իր հօրեղբոր միջնորդների ամենաազատա-
միտներին հետ և զարձկ էր կենտրոն այն ա-
մենի, ինչ որ ամենաառաջաւոր և ամենաու-
սաւորն էր թիւրքայում:

Երբ 1867 թվին սուլթան Արդու-Աղիւլը իր
երկու եղբորդիներին, Մուրադ և Արդու-
Աղիւլներին հետ դնաց Պարիզ—պրինց Մու-
րադը հազարի աջողութիւն ունեցաւ Տուլիէի
պալատում:

—Եւրօպացի—թիւրք:

Մինչ պրինց Արդուլը լուսկեաց էր և մտայ-
նաւոր Մուրադը հոյակապօրէն խօսում էր
Ֆրանսիայի, բազմաթիւ տեղի:

Կայսր Նապոլէոն III և մանաւանդ կայսրու-
հի Եւգենիէն սքանչացած էին «Բոսֆորի ափե-
րից եկած եւրօպացուց»:

Վերադարձին, պրինց Մուրադը յանձնարա-
րեց «Havre» լրագրի խմբագիր յոյն Գապա-
րին, յայտարարեց թիւրքական բարբերին Մո-
լիէի «Ժլաւալը», որին նա ինքն տուեց այս
վերնագիրը:

—Փնթի-Արդուլ. «Ժլաւալ Արդուլ»:

Այդ անունը ժողովրդական դարձաւ թիւր-
քայում, ինչպէս Ֆրանսիայում «Հարպագոն»
անունը:

Պրինցը տեսել էր այդ պէտքը «Comedie
Française»-ում և ցանկացաւ տեսնել նրան
թիւրքական ընկի վրա:

Ուրեմն մեր արդիւնաբերող ժողովուրդը
այս տարի ևս ծանր նիւթական հարուած կը
կրէ թէև առանց այդ էլ արդէն նա տնտե-
սական տեսակէտից, նախանձնի վիճակի մէջ
չէ գտնվում... Եւ այսօր մենք ակնատես
ենք լինում, թէ ինչպէս մեր երկրագործ դա-
սակարգը, հայ ժողովրդի գերակշռող այդ ա-
հագին մեծամասնութիւնը, սխտեմատիկ կըր-
պով նիւթապէս հիւծվում և ծիրվում է...
Անմահ Փարպեցու գովաբանած ձոխութեան և
հարստութեան տխուր բեկորներն են միայն
այժմ երևում... Պատճառը:

Պատճառները բազմաթիւ են. զանազան
ժամանակների ձախող հանգամանքները, ժո-
ղովրդի բազմաթիւ հանգէպ հողի անփոփոխ
քանակութեան, ջրի պակասութեան և, ի
լրումն այս ամենի, ժողովրդի տգիտութիւն
ու անհամբաւելութիւնը... որոնցից իւրա-
քանչիւրը իր հերթին կատարել և կատարում
է կործանարար դեր մեր ժողովրդի նկրտական
և բարոյական կեանքի վրա...

Այս ցաւերին հնարաւոր է դարձան անել
միմիայն միացեալ-հաւաքական ոյժերով, ո-
րովհետեւ անհատականապէս (իսկ այդպիսի
անձնուէր անհատներ կան, անշուշտ) շատ
քան չէ կարելի անել, գլխաւորապէս կապի-
տալի բացակայութեան շնորհիւ:

Սակայն ցաւօր սրտի պէտք է խոստովա-
նել, որ մենք, հայերս, (բացառութիւնները
յարգելով) զաղափար անգամ չունենք կող-
գիւղ ոյժերով գործելու մասին, ապա թէ ոչ
հիմա մեր մէջ ևս պէտք է երևան գային այն
կօսակերպութիւնը, ընկերակցութիւնները, որոնք
այնքան մեծ դարձ են տալիս եւրօպական քա-
ղաքակրթված ազգերի նիւթական զարգաց-
մանը:

Երկու տարի է, ինչ Վաղարշապատում գո-
յութիւն ունի սպառողների ընկերութիւն: Այս
ընկերութեան հիմնադրութիւնը նոյն իսկ մեր
մասնուում ողջունվեց, իբրև մի գեղեցիկ, օգ-
տակար գործ, որը յայտնվում էր խուլ Վա-
ղարշապատում, մեր կեանքի մօտօտօս միջո-
րոտում: Սակայն մի տարվայ գործունէու-
թիւնը ցոյց տուեց, թէ մենք սրբան ապրկար
ու անշուրճ ենք այդպիսի օգտակար գործեր
վարելու և ճիւղաւորելու մէջ: Ծարվայ վեր-
ջին վարչութեան ընդհանուր ժողովին ներ-
կայացրած հաշիւից յայտնվում է բաւական
խոշոր դեֆիցիտ, որը ստիպված են լինում գո-
ցել պահեստի դրամաւոր մի որոշ մասը վայր
դնելով:

Ուրիշի ազատամտութիւն մի թիւրք պրին-
ցի համար:

Գահաժառանգները միայն Անգլիայումն չէ,
որ համարվում են «ազատամիտների պարա-
զիտ»:

Բօլէն ծանր էր:

Հերցօգովինայում արդէն թափվում էր ա-
րիւնը: Սերբիայում նոյնպէս հոտում էր արիւ-
նը: Բօլշաւիստ ոտքի էր կանգնում:

Բայց ամենը ակնկալում էին ընթացիկ և
վերանորոգութիւն: Հին-թիւրքական մեծում էր:
Սպասում էին նորի ծննդեան: Գ. Պօլիսը պատ-
րաստում էր շրեղ հանդէսներ ի պատիւ Մու-
րադ-Վերանորոգչի թագաւորութեան:

Լրագրիները լռել էին:

Նրանց հրապարակած էր առ այժմ լռել: Բայց
ամենը գիտէին, որ պալատում ընթացիկներ են
պատրաստվում:

Սուլթան Մուրադը, գումարելով պրինցնե-
րին, մինիստրներին, աւագանին յայտարա-
րեց իր ծրագիրը:

Ջնլումն «բայիս» և ուղղափառների բա-
ժանման:

Լիակատար հաւասարութիւն մուսուլմաննե-
րի և քրիստոնեաների:

Բոլոր պաշտօնները, սկսեալ ամենաբար-
ձրներից, կարող են վարել քրիստոնեա-
ները:

Ջնլում են շարիաթի այն օրէնսդրութիւն-
ները, որոնք այլ ևս չեն համապատասխանում
եւրօպական քաղաքակրթութեան:

ԲԱՆԱՍԻՆ ԲԱՆԱՍԻՆ

ԲՈՍՖՈՐԻ ՈՒՐՈՒՆԱԿԱՆԸ

(Լ. Դարչակովի):

Մեր սիրեցեալ եղբայր սուլթան Մուրադ
V-ըը ստիպված էր, Նախաձեռնութեան
կամքով, թողնել պետութեան և խալիֆա-
յութեան ղեկը և մենք, համաձայն Օսման-
եանների օրէնքին, բարձրագոյնը մեր
օգտաւար նախնիներէրէ գահը:

(Հովարսակ սուլթան Արդու-Համիդի գահակա-
լութեան մասին):

Բոսֆորի եւրօպական ափի վրա, Երզը-
Քիօսկի մօտ, որ նայում է սարից, այգիների
կանաչի միջից, կանգնած էր—կարծես ժան-
տախտահար—մի հազարի պալատ:

Պահպաններ են կանգնած դռանը:

Ոչ մի կախիչ չէր մօտենում նրան: Նոյն

իսկ ծովափին մօտ չէր լողում:

Ոչ մի անցորդ չէր անցնում մօտից, ամբողջ

28 տարի. չէր անցնում մի կտոր:

Դա պալատ է...

Նրա անունը արտասանում էին Գ. Պօլսում

22-ովով:

—Չարադան:

Նրա մէջ ապրում էր...

Այդ անունը մարդիկ արտասանում էին Գ.

Պօլսում, չորս կողմ նայելով, արեւօք ոչ

ոք ակնաչ չէ գնում:

—Մուրադ:

«Մուրադ-Վերանորոգիչը»:

Նախկին սուլթան:

Աւագ եղբայր նորին մեծութեան, սուլթան

Արդու-Համիդի:

1876 թ. մայիսի 30-ին հարիւր և մի թըն-
դանօթային հարուածներ աւետեցին Գ. Պօլսին
սուլթան և խալիֆ Մուրադ V-ի գահակալու-
թիւնը:

Ի՞նչ էր պատահել պալատում:

Գ. Պօլսում ստիպել լուրեր էին պատում:

—Սուլթան Արդու-Աղիւլը մօրթել է ի-

րան:

—Նրան մօրթել են:

—Նա բացել է իր երակը լողաբանում:

—Նրան մօրթել է սափրիչը:

Ահա ինչ էր:

Այնու ամենայնիւ հարիւր և մի հարուածը

լցրեց ամենքի սիրտը ուրախութեամբ:

Օտար պետութիւնների ներկայացուցիչները

շտապեցին մատուցանել սուլթան Մուրադին

իրանց շնորհանդրութիւնները:

Այս անգամ անկողն շնորհաւորութիւններ:

Ժողովուրդը արդէն կոչում էր Մուրադ V-ին.

—Մուրադ-Վերանորոգիչ:

Օղում գարնան հոտ էր փչում:

Սուլթան Արդու-Աղիւլը չէր սիրում արքա-

յազն Մուրադին, իր եղբոր-որդուն, Արդու-

Մէլիդի որդուն:

Ցիւղի մէջ աւագագոյնին, գահաժառանգին:

Եւ նա նախանձում էր նրան դէպի ժողո-

վուրդը:

Մենք սկզբնական և յոռեան չենք և հաւատում ենք բարի, օգտակար գործի յաղթանակին և յոյս, ենք տածում, որ նախորդ տարվայի փորձառութեամբ սպառողական ընկերութիւնը կաշխատի գէթ այսուհետեւ կարգաւորելու, արդիւնաւորելու և ճշգրտութեամբ իր գործունէութեամբ, ոգևորված ժողովրդի կենսական շահերին ծառայելու տենչով: Վերջապէս, պարոններ, չը պէտք է թոյլ տալ, որ այսպիսի ցանկալի երևոյթներ շուտ անհետանան գիտութիւնը աստղի նման և դատապարտվեն քայքայման, մեր ասիական անշարժութեան և դատապարտելի թուլամորթութեան պատճառով: Մեծ է սպառողական ընկերութեան կոչումը. նա կոչված է ժողովրդի նիւթական շահերին ծառայելու, ազատելով նրան չարչիւնների և կողոպտիչ վաճառականների ճիւղերից: Այսպիսի մի ընկերութիւն ներկայանում է մեզանում մի ակտիւ օվազիս մեր ներկայ կեանքի ճշդ աւազանութեան մէջ:

Առաստաղի երբ խոր թափանցում ենք մեր հասարակական, հանրային գործերի մէջ, գործերի, որոնց նպատակն է ծառայել հանրութեան մտաւոր-բարոյական շահերին, նկատում ենք մի շատ ցաւալի երևոյթ, այն, որ մեր բոլոր հասարակական—հաւաքական գործերի մէջ մեզանից իւրաքանչիւրը աշխատում է իր անձնական շահի կամ փառքի տեսակէտից, որ մենք նոյն իսկ նուիրական գործերի մէջ ևս առանձնորոշում ենք մեր անհատական—եսական գծում միտումներով, որ այդ գէպը ընդ էր որդ գեր են խաղում մեր մէջ թայֆայական, կամ կուսակցական ստոր, եղկելի ձգտումները... Այս են ապացոյցանում մեզ մեր շուրջը կատարվող առօրեայ գիտութիւնը:

Տուժողը այս պարագային լինում է, ի հարկէ, գաղափար, բարի գործը. և ի հետեւումս դրա, մեր նմանով, խեղճ ու թըշուառ մասնայի մէջ, որ դեռ ընդունակ չէ իր կենսական շահերին գիտութեամբ վերաբերվելու, առաջ է գալիս այն դառն համոզմունքը, թէ՛ օգտակար գործ, հաւաքական գործունէութիւն, երկրագործութեան արհեստական զարգացում և այլ այսպիսի բաներ արեւակայական են և չեն կարող իրականանալ, գոնէ մեր մէջ:

Եւ այսպէս, մեր անտակտ և անխոհմ գործունէութեամբ մեղցնում ենք մասնայի մէջ հաւատը դէպի բարին, գեղեցիկը: Եւ քանի որ կը շարունակենք գործել մեր այս դատապարտելի և բացասական ուղղութեամբ, մեր մէջ ոչ մի կուսութեամբ գործ չի զարգանայ և մեղանում կը թագաւորէ անթափանց խաւարը իր կորստաբեր և տխուր ապագայով:

Բեն. Մարտիրոսեանց

ՆՅՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսրուհի Մարիայի կողերի հոգաբարձութեան կողմանէն բաժնի խորհուրդը մեզ ինչպէս է տպագրել հետեւեալը. Հոգաբարձութեան ականաբարական հիւանդանոցը տեղափոխել է Վերիկոնեանական և Կրիլովսկի փո-

Միւստորների պատասխանատուութիւն: Կառավարութեան ներկայացուցչական եղանակ:

Հին-Թիւրքերը սարսափով և յուսահատութեամբ համակվեցան:

«Երեստատը Թիւրքին», պարագլուխ ունենալով Միդհատ փաշային, մշակում էր բէֆօրմները:

Կ. Պօլիսը սպասում էր միայն թագադրութեան, որ անօրինակ հանդէսներով ողջունում էր Մուրադ-Վերանորոգչին:

Բայց թագադրութիւնը ուղացնում էին... Ջոպային՝ բնութիւնից, հիւանդութեամբ, Մուրադը աւելի և աւելի վատ էր զգում իրան:

Նա ամենից շատ էր աշխատում բէֆօրմների ծրագրի վրա, յոգնում էր չափազանց և խեղաբարոյութեան սոսկալի ուրուականը աւելի և աւելի էր մոտենում:

Մայիսի 30-ի դէպքերը ցնցեցին նրան սոսկալի կերպով:

Նա հալիլիցիաների ունեցաւ: Նրան թուում էր, որ իրան մեղադրում են Արդու-Արդիի սպանութեան մէջ:

Նա չէր կարողանում քնել: Նա զինու մէջ սկսեց մոռացումս գտնել:

Եւ դա աւելի սաստկացրեց հիւանդութիւնը: Պայծառ միտքը մաքառում էր մաշկ խելագարութեան հետ:

Եւ շրջապատողները գողում էին բէֆօրմների բաղնի մասին:

Կ. Պօլիսը սպասում էր բէֆօրմներին, թագադրութեան: Ամեն բան պատրաստ էր հան-

ղոցների անկիւնը, Լիբէրմանի տունը, որ աւելի ընդարձակ և յարմարաւոր շինութիւն է: Հիւանդանոցում կայ աղբատների համար 20 ձրի մահճակալ: Այն աղբատ անձերը, որոնք չեն ուզում կամ չեն կարող սպասել ձրի մահճակալների ազատելուն, օրական 50 կօպէկ վճարելով, կարող են մնալ հիւանդանոցի ընդհանուր բաժանմունքում: Առանձին սենեակ պահանջող հիւանդները վճարելու են օրական 3 ռ., իսկ 2—4 հոգի մի սենեակում եղողներին օրական 1 ռ. 50 կ., մաքցածներին՝ այսինքն ընդհանուր մասում եղողները—50 կօպէկ: Հիւանդանոցի նախկին կառավարիչ, յայտնի ականաբայ Տարսայիճէն անբուժելի կերպով հիւանդացած լինելով, նրա տեղ հրաւիրված է Պետերբուրգի կենտրոնական հոգաբարձութեան խորհրդով՝ Բախա Վասիլեվ-նա Պետետատ կին ականաբայժը, որ յայտնի է իր գիտական հետազոտութիւններով այդ ճիւղի մէջ:

Պետերբուրգում ներկայ օգոստոս ամսին բացվել է «Մուզիկայի թէօրիայի դասընթաց Ս. Տ. Արբակումովի»: Այդ դասընթացի աչքը շնչող մասն այն է, որ ուսուցիչն ընդունում է գաւառների հետ գրագրութեան մտնելու գովելի սովորութիւնը: Գաւառից այն անձերը, որ չեն կարող գնալ մայրաքաղաք և սովորել, յայտնի են իրանց երգեցողական և կոմպոզիտորական կրթութեան թերութիւնները լրացնել, կարող են ուղարկել իրանց շարագրութիւնները, խորհուրդներ հարցնել, թէօրիայի մասին դասախօսութիւնները ստանալ և այլն, և այլն: Այս տեսակ կենդանի յարաբերութեան միջոցով դասընթացի հիմնադրից յոյս ունի կատարուող կերպով առաջ տանել իր հետաւոր աշակերտների զարգացումը մուզիկայի մէջ: Այդ հիմնարկութեան հասցէն հետեւեալն է. «Петербург, Кабинетская 20. «Курсы Теории Музыки С. Т. Аббакумова»:

Մեզ ուղարկել են Թիֆլիսում նոր հաստատված մի ընկերութեան կանոնադրութիւնը: «Պարտնաթող թողականութեան փոխադարձ ընկերութիւն» է դա: Նրա նպատակն է ընկերութեան անդամներին կամ նրանց ընտանիքներին միջոցներ հայթայթել նրանց նիւթական բարեկեցւելու համար: Ընկերութեան օգնութիւնը կարող է լինել դրամական օժանդակութիւնով, կարելի ունեցողներին օգնելով պաշտօն գտնելու գործում, բժշկական օգնութիւն հասցնելով, հիւանդանոց դնելով, թաղման ծախսերը հոգալով, ծերերին ու անկարողներին անկեղծացնելու և որբերին որբանոցներում տեղադրելով, էփան բնակարան, էփան փոխառութիւն գտնելով և դատաստանական արդար պրօցէսներ վարելուն օգնելով: Ընկերութեան կանոնադրութիւնը և ուրիշ մանրամասն տեղեկութիւններ ստանալու համար, պէտք է դիմել Կադէէսկայա փողոց № 11, Պագերիկին:

Ղէսնքի համար:

Միդհատ փաշան համոզեց Մուրադին ինքնաւալ նշանակել «հիւանդութեան դէպքում» գաւաթառանգին, պրինց Արդուին:

Գահաթառանգները միայն Անգլիայում չեն համարվում «վիզեր»:

Մուրադը յօժարեց:

Մուրադը պահանջեց, որ իր հիւանդութեան դէպքում ևս, իր գործը կատարվի, բէֆօրմները մտցվեն:

Իսկ հիւանդութիւնը շարունակ աճում էր:

Հիւանդի մօտ էր նրա հին բժիշկ Կապոյէօնը: Նա թոյլ չէր տալիս հիւանդի մօտ ոչ մի բժշկի:

Հիւանդութիւնը աւելի և աւելի զարգանում էր:

Վերջապէս սուլթանուհի-վալիէնը՝ բերել տունը Վիէնայից մի հուշակաւոր բժշկապետ, պրօֆէսոր Լէյդէնսթրօֆին:

Հուշակաւոր պրօֆէսորը գտաւ, որ Կապոյէօնի բժշկութեան սխառնը «բանցաւոր է», որ այդ սխառնը տանում է հիւանդին դէպի կորուստ:

Բայց մի քանի օրից յետոյ, պրօֆէսոր Լէյդէնսթրօֆը հիւանդին նոր հետազոտութեան ենթարկեց:

Եւ յայտարարեց.

«Ես գնում եմ. ես այստեղ այլ ևս անելու բան չունեմ: Ես տեսնում եմ, որ հիւանդը անբուժելի է:

Օգոստոսի 20-ին շէյխ-ուլ-իսլամը պատրաստեց «ֆիթվա», ակտ՝ սուլթան Մուրադ Վ-ի գա-

Թիֆլիսի Մեալի բանտից վերջին շաբաթվայ ընթացքում ազատվել են մօտ 40 բանտարկեալներ, որոնց բանտարկութեան ժամանակը կրճատված է Բարձրագոյն մանիֆէստի հիման վրա:

Մամուլի մէջ մի շատ ազդակալող լուր է պատում, այն որ իւր թէ Օգոստոսի դարձնելու են «Պորտո-Փրանկո», այս ինքն Օգոստոսի բաց է լինելու բոլոր ներմուծվող ապրանքների համար և մաքս չի վերցվելու: Դրա նպատակը լինելու է պատերազմի առաջացրած ճգնաժամը կամ կրիզիսը թէթեւացնել: Առևտրական շրջաններում այդ լուրերը դեռ հաստատութիւն չեն գտնում, թէ և բոլորն էլ ընդունում են, որ առևտուրը բոլորովին ընկել է, ցորենի արտահանութիւնը քչացել և Հեռուոր Արևելքի հետ եղած առևտրական կենդանի յարաբերութիւնն ընդհատվել:

Օգոստոսի 15-ին Մերվի զինուորական բուժարանը մտել է 1 հոգի խօլերայով հիւանդ և մեռել է. բաղաքային հիւանդանոց մտել են 3 հոգի, մեռել է 1-ը: Օգոստոսի 16-ին զինուորական բուժարանում խօլերայով հիւանդներ թիւն էր 53, իսկ բաղաքային հիւանդանոցում—6: Նոր-Բուխարայում օգոստոսի լոյս 16-ի գիշերը խօլերայով հիւանդացել է Ժիւնիցիցիկ անունով մի արհեստաւոր, որ և մեռել է օգոստոսի 16-ին: Գաղափարի խօլերային հիւանդանոցն ընդարձակել են. աւելացրել են 10 նոր մահճակալ:

Ռուսաց թեմակալ առաջնորդներից մէկի հարցին պատասխանելով, ս. Մինօք բացատրում է, որ հոգևորականների բոլոր զաւակները, նրանց ծննդեան ժամանակից բոլորովին անկախ (եթէ նոյն իսկ նրանք չափահաս եղած լինեն իրանց ծնողների հոգևոր կոչում ընդունած ժամանակը) ծագումով պատկանում են ժառանգական պատուաւոր բաղաքացիների ժառանգարքին և իրաւունք ունեն այդպիսի վկայագիր ստանալ իրանց հօր ծառայութեան տեղի կօնսիստորայից:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԲԱՐԳԻ ՇՈՒՐԶԸ

Մանգամաւանքիւնցեր Լեաօեանի նախաւարի մասին: Շարունակում ենք տալ Լեաօեանի մօտ տեղի ունեցած ճակատամարտերի նկարագրութիւնը: Ինչպէս յայտնի է հեռագիրներից, այդ կռիւներից երկու պատերազմի կողմերից մասնակցել են կէս միլիօն զօրքից աւելի և 1300 թնդանօթ: Լօնդօնից հեռագրում են օգոստոսի 10-ին «Вирж. Вѣд.» լրագրին. «Պիւրը դեռ շարունակվում է, բայց թնդանօթային կրակը հանդարտվում է: Եւ պոստայինները յամառաբար ձգտում են անցնել ռուսաց ձախ թիւի ետևը ուսուական կողմից: Այստեղ մասնակցում են կուլին բոլոր առ ձեռն ոյժերը: Օգոստոսի 18-ին, երեկոյան, եւ պո-

հից հրաժարման և, համաձայն օսմանների օրէնքին, ցեղի մէջ աւազագոյնի, սուլթանի եղբայր—պրինց Արդուլի գահակալութեան մասին:

Այդ ակտը կազմելիս ներկայ էր «Բէֆօրմի» կուսակցութեան պարագլուխ Միդհատ փաշան, որ ապահով էր բէֆօրմների մասին:

Օգոստոսի 31-ի գիշերը սուլթանի Գօլմա-Բախէ մարմարեայ պալատը շրջապատեց զօրքերով:

Օգոստոսի 31-ին, առաւօտեան ժամը 8-ին, պրինց Արդուլը, հանդիսաւորապէս, à-la-Daumont լծված կառով, փառաւոր շքախմբով, ընթացաւ Թօփ-Գափուի պալատը, Մտաւորուի մասում, ուր սպասում էին միլիտանները և պետական աւագանին:

Իսկ առաւօտեան ժամը 10-ին հարիւր և մի թնդանօթաձուլութիւնը աւտոյն մայրաքաղաքին սուլթան և խալիֆ Արդուլ-Համիդի գահակալութիւնը:

Հաւատարմութեան համար երգման և ձեռք համընկելու արարողութիւնը վերջացաւ ժամը 3-ին:

Եւ ժամը 4-ին կէսօրից յետոյ, նոր սուլթանը, փառահեղ զուգված գրօսանաւով, շքեղապէս զարդարված մակոյկների ամբողջ նաւատորմով, ժամանեց Գօլմա-Բախէի մարմարեայ պալատը:

Նախկին սուլթան Մուրադին և նրա հարէմը արդէն տեղափոխել էին Չարագանի պալատը, որը այդ րօպէից փակվեց յաւիտեան ամենքի համար:

Նացիները նորից ձեռնարկեցին արշաւանքի Ժիւնիստանչէնի ճանապարհի վրա: Ռուսները եռանդով առաջ են խաղում դէպի հարաւ, երկաթուղուց դէպի ձախ: Մուկլէնից հեռագրում են, որ Լեաօեանից հասաւ մի գնացք 300 եւպոնացի զերիներով: Լօնդօնի լրագրիներին հեռագրում են, որ եւպոնացիները ստացան թարմ աջակից ոյժեր և ներկայումս սպառնում են ռուսաց զիւրքերին Լեաօեանից դէպի արևմուտք: Բէյութերի գործակալութիւնը ստացել է մի ամբողջ շարք կցկաւոր և խառնաշփոթ լուրեր Լեաօեանի ճակատամարտի մասին, որոնք սակայն հաւաստիացնում են, թէ եւպոնացիների աջողութիւնը այդ կռիւների մէջ անկասկած է: Ռուսաց զիւրքերը բանակատեղից գործակալութեան թղթակցին հաղորդում են. եւպոնացիների արշաւման մինչև սկիզբը ես գտնվում էի Լեաօեանում. ռուսները գեղեցիկ զիւրքեր են գրաւում, որոնք տարածվում են կիսաշրջանով մինչև Մուկլէն: Շարունակ հասնում են նոր զօրքեր և թընդանօթներ. ռուսաց բանակը այժմ համախմբված է աւելի մեծ բանակութեամբ, քան երբ և իցէ: Թարմ զօրքերի գալը եւրօպական Ռուսաստանից որևորութիւն է առաջ բերում զօրքերի մէջ, որոնք միշտ տառապում էին այն մտքով, թէ անհրաժեշտ է շարունակ նահանջել թշնամու առաջ զինուորական պետերի հրամանով: Լեաօեան-Մուկլէն երկաթուղային գծի վրա անընդհատ տրանսպորտներ են փոխադրվում:

«Journal» լրագրի թղթակիցը հեռագրում է Լեաօեանից օգոստոսի 15-ից. «Ես եկայ օգոստոսի 13-ին Անշանչուկանի դէրբը, որ 28 կիլոմետր է Լեաօեանից դէպի հարաւ: Տեղի բնաւորութիւնը թույլ էր տալիս տեսնել իմ առաջ ահադին տարածութիւնը. ես կարողանում էի ոչ միայն դիտել ռուսաց բաւարեաների հրաձգութիւնը, այլ և հետևել շրապիւնների պայթման եւպոնացիների գրաւած լանջերի վրա: Կէսօրից յետոյ ամենքը դատարարվեցին մեծ ճակատամարտի ակնկալութեամբ: Սկսեց սաստիկ անձրևել, բայց ռուսաց զօրքերը ստօյկաբար մնում էին իրանց նպատաւոր դիրքերի վրա, ուր եւպոնացիները հետևեալ օրը, ընդհանուր կարծիքով, պէտք է կրէին ահադին կորուստներ, բայց լուսածագին հրաման եկաւ թողնել դիրքերը: Ինչպէս միշտ, եւպոնացիները շրջանային շարժումը (թիկունքի ետևը անցնելու փորձը) ստիպեց հարաւային բանակը նահանջել գրեթէ առանց որ և է կուլի: Օգոստոսի 14-ին կէսօրին նահանջում կատարեալ էր: Սարերից մէկի բարձունքից ես տեսայ այսպիսի տեսարան. հիւսիսում ռուսաց հետևակը, թողնելով իր դիրքերը, նահանջում էր սիւներով և երաժշտութեամբ. հարաւում երևացին եւպոնական խուզարկուները, որոնց ետևից շարժվում էին եւպոնական զօրքերի մեծ կոյտեր: Կէս ժամվայ ընթացքում իմ աչքերիս առաջ կանգնած էին երկու թշնամի բանակները, որոնք երկուսն էլ շարժվում էին դէպի հիւսիս. բարձրացաւ ծխի սիւն—ռուսները այրեցին երկաթուղու կայա-

Եւ սեպտեմբերի 7-ին վաղից այն շքեղ հրավառութիւնը, որ Կ. Պօլիսը պատրաստել էր Մուրադ-Վերանորոգչի թագադրութեան համար, սուլթան Արդուլ-Համիդի թագադրութեան առիթով:

Ուսշինը քաղորդ ուղարկվեց:

Միդհատ փաշան...

Այդ օրից Չարագանը չը մոռացվեց, բայց միայն մի անգամ նա սաղկեց իր մասին խօսել:

Երբ ոմս Ալի-Սուլալի խելագար փորձ աւրեց ազատել նախկին սուլթան Մուրադին:

1876 թ. մայիսի 31-ից Չարագանի ահագին պալատը մոայլ և մեծակեաց բարձրացած էր Բօսֆօրի եւրօպական ափի վրա:

Կարծես ժանտախտահար լինէր:

Ոչ ոք չէր համարձակվում նոյն իսկ մօտենալ նրան: Նոյն իսկ նաւակով ափին մօտ չողալ:

Առասպելներ էին պատում ստորերկրեայ ուղիների մասին վերեց, սարեց, ելզըզեց:

Անցնելով այդ ուղիներով, իբր թէ կարելի էր սեփական աչքերով տեսնել Մուրադին, միշտ լուր աներեղոյի նրա համար:

Բայց Չարագանի և Մուրադի մասին խօսում էին շուրջով, չորս կողմ նայելով, սոսկալով նոյն իսկ նրանց անուններից:

Ինչպէս խօսում են ուրուականների մասին: Այժմ ուրուականը չքացաւ:

«Նախկին սուլթան Մուրադը», «Մուրադ Վերանորոգիչը»,—մեռաւ շքաւարտեց, որով երկար ժամանակ տառապում էր»:

ցան հոսանքան վերջապահ գնդերը, Կուր-
պատկերին աղողից, թևապահ գործարարինե-
րի ուժեղ ցանցի պաշտպանութեան օգնու-
թեամբ, նահանջիլ հոսանքան գործի մեծ մասի
հետ: Նա խորտակեց կամուրջները և խանգա-
րեց այսպիսով երկաթուղիները հետապնդումը:
Այժմ ամենի հետաքրքրութիւնը կենտրոնա-
ցած է երկաթուղիին ալ թեի գործունէութեան
վրա: Օգոստոսի 20-ի գիշերը և օգոստոսի
21-ի առաւօտեան Կուրօվին թեքվեց դէպի
արևմուտք, յուսարով յարձակվել թևակողմից
հոսանք գործի մնացորդի վրա Լեւոնեանում:
Ենթադրում են, որ Կուրօպատկերը կորցրել է
շատ մարդ, որոնք գերի են ընկել: Հաւանա-
կան է, որ տեղագրական պայմանները ան-
յաղթելի արգելք կը հանդիսանան Կուրօվի
առաջխաղացութեան համար:

Չիֆնի, օգ. 23 (Բէյութէր): Պօրտ-Արտուրը
պաշարող երկաթուղիին բանակը սաստիկ տանջ-
վում է արևելային փորձառութիւնից և տեղ-
գից: Պաշարուող այնքան թույլ է, որ բերդա-
պահներն ստանում են ուսուցիչներն առատ
պաշարներ: Նրանց սովի երկիւղը չէ սպառ-
նում: Այստեղի երկաթուղիները ամեն օր սպա-
սում են, որ հոսանքան նաւատորմը նորից ծով
դուրս կը գայ:

Լիսսաբոն (Հալա): Ժամանց հոսանքան
«Տերեց» կը յայտնուի:

Մոնիթին: (Բերլինի վրայով), օգ. 22-ին:
Օգոստոսի 18-ին Օկուր և Նօրդօւի բոլոր յար-
ձակումները յետ մղվեցին: Պահեստում դեռ
կային բաւական շատ պահեստագործեր, այն
ինչ Կուրօվի 5 դիվիզիաներ անցան Տայցդի-
խէ գետը, որի պատճառով Կուրօպատկերը օգ.
19-ին շարժվեց նրա դէմ, բանակի մի մասը
թողնելով իր վերջապահ՝ Լեւոնեանի: Օկուր
նորից անախտակ է օգ. 19-ի կէս օրին սկսեց
առաջ խաղալ, ուղղակի լեւոնեան քաղաքը,
կայարանը և հոսանքան ամբողջութեամբը և
կրկնվող, ետադրում յարձակումներ գործեց նը-
բանց վրա: Մինչև օգ. 21-ի կէս օրը Մոնի-
դէնի և Լեւոնեանի միջև յարաբերութիւնը դեռ
ազատ էր: Օգ. 20-ին Կուրօպատկերը կուռ
էր Լեւոնեանից 12 կիլոմետր հարաւ-արևելք
Կուրօվի հետ, որը գործելու սպասողական
եղանակ էր բանակում և գիշերը յետ նահան-
ջեց, յուրեքին նայելով, Տայցդիխէի այն կող-
մը: Ռուսները կորուստը 5-օրեայ կուռում կազ-
մում է մօտ 10,000 մարդ, իսկ երկաթուղիին-
րին 20,000 հոգի: Զախտամարտի հետևան-
քը կախված է հոսանքան հրամանատարի
վճռից: Լուրերին նայելով, ռուսները գիշերը
թողին Լեւոնեանը, լիակատար կարգով նա-
հանջելով Տայցդիխէի այն կողմը:

Լոնդոն: (Բէյութէր): «Դայի Տէլեգրաֆ» ա-
սում է. «պարզ է, որ գնդերը Կուրօպատկերին
մինչև անգամ հակառակորդները կարծիքի մէջ
անապահ փառք ձեռք բերեց իր տակտիկայի
հմտութեամբ: Նա զարմանալի ճարտարութե-
ամբ դուրս բերեց իր գործերը վտանգաւոր
գործիւնից, որի մէջ նրանք ընկան պատե-
րազմի վերջը ուղղաթիւ գիշեր: Այդ զարմանալի
մանկութիւնները Պօրտ-Արտուրի պաշտպանու-
թեան համար երկու քաջագործութիւններ էին,
որոնք պահպանում են հոսանքան գիշերի
փառքը»:

Չիֆնի, 23 օգոստոսի: (Բէյութէր): Ալիւրի
մեծ բեռով շոգենակը պատուեց պաշարման
գիծը և եկավ Պօրտ-Արտուր, ուր նրան դի-
մաւորեցին հիացմունքով: Ռուսները ծովային
12 դիւանդոս երկու թնդանոթներ գրին Պէ-
րեպէլինայ լեռան վրա և ուղղակի ծովում են
այնտեղից երկաթուղիին գիծերը, որոնք գտնու-
ւում են զինուորական լիցեի պրօֆեսօր գնե-
րալ Տատեմի հրամանատարութեան տակ, որը
եկել է գործը ուժեղացնելու համար: Գնեհրալ
Օշիմա, որը վերաբերվեց վերջին շտաբի
ժամանակ, շուտով կազդուրվում է:

Լոնդոն, 24 օգոստոսի: (Բէյութէր գործ.):
«Մորնինգ Պօստ» թղթակիցը, որ գտնվում է
Կուրօվի խմբի հետ Լեւոնեանի մօտ, հաղոր-
դում է օգոստոսի 21-ից, իբր թէ շատ կարե-
ւի է, որ հոսանք ուժեղեց անկի մեծ են, քան
թէ ենթադրում են: Ռուսները յուսահատական
գիծադրութիւն են ցոյց տալիս երկաթուղիին-
րի յարձակումներին և արտիլերիական սաս-
տիկ կրակ են արձակում Կուրօվի գործի շրջա-
նային շարժման դէմ: Քննելով Լեւոնեանի մօտ
եղած ճակատամարտը «Մասնագր» լրագրի
ասում է. «Պէտք է ասել, որ գնեհրալ Կուր-
պատկերը մեծ հմտութեամբ իրագործեց պա-
տերազմական դժուար գործողութիւններից
մէկը, յետ տուեց Օկուր և Նօրդօւին, ուժա-
սպառութեան հասցրեց Կուրօվին և հնարա-
ւոր դարձրեց, որպէս զի հոսանքան գործը
կարողանայ կենտրոնանալ Ենտայի մօտ: Այդ

աչքի ընկնող մի քաջագործութիւն է, որ վը-
կայում է հրամանատարի շնորհի և զինուոր-
ների տոկուն արեւութեան մասին:

ԵԱՆՏԱՅ, (Բէյութէր գործ.): Օգոստոսի 21-ի
գիշերը ռուսները յետ գնացին Լեւոնեանի շը-
րջակայքի դիրքից անցան Տայցդիխէ և այդ-
ցին կամուրջները, մինչ դեռ այդ ժամանակ
հոսանք ուժեղ գործարարները պաշտպանում էր
Ենտայը Կուրօվի դէմ: Լեւոնեանի շտաբը
սկսվեց օգոստոսի 17-ին: Օկուր յարձակում
գործեց հարաւից և հարաւ-արևելքից իսկ
Նօրդօւն՝ հարաւ-արևմուտքից: Թափվում էր
ուռածները սարսափելի անձրև, երկաթուղիին
հետևակ գործը փոփոխ: Մի անգամ երկաթուղի-
ցիները հասան խրամատներին, բայց պէտք է
յետ նահանջէին մեծ կորուստներով: Օրվայ
ընթացքում կուր անդուլթիւնը ռուսների
կողմէն էր, որ երկաթուղիներին դուրս բերեցին
երկաթուղու գծի երկարութիւնով դասաւոր-
ված զինվորից: Օգոստոսի 18-ի լուսաբացին
երկաթուղիներն սկսեցին ուղղակի ծովին ա-
մեն կողմից: Ռուսական հետևակն սկսեց ա-
ռաջխաղալ, բայց երկուցեան դէմ լուր ստաց-
վեց, որ Կուրօվին սպանում է երկաթուղու
Ենտայի մօտ, այն ժամանակ ռուսները յետ
նահանջեցին, մի քանի օր թող տուեց երկաթ-
ուղիներին երկու բաւարէա դնել հոսանքան
բանակը երկաթուղու գծի երկարութեամբ
ուղղակի ծովին համար: Օգոստոսի 19-ին հոս-
անքը յետ նահանջեցին գլխաւոր դիրքերից,
որ բաղադրի շըրջը մի օղակ էին կազմում,
այն ժամանակ, երբ սալախուրդներ անցնում էր
գետը: Ժամը 2-ին երկաթուղիները գրին եր-
կու թնդանոթ, որոնցով սկսեցին կայարանը
ուղղակի, մեծ կորուստներ պատճառելով
ռուսներին: Մի և նոյն ժամանակը երկաթուղի-
ն հետևակը յարձակում գործեց հոսանք
ներքին դիրքերի վրա, բայց յետ ընկեց: Երե-
կոյեան երկաթուղիները մօտ բերին մեծաբե-
րան թնդանոթներ և ուղղակի ծովին Լեւոնեանի
հոսանքաւոր: Ռուսները գրաւած էին
պահում իրանց դիրքերը մինչև օգոստոսի
21-ը, երբ յետ նահանջեցին գետի միւս կողմը:

Օգոստոսի 21-ին հոսանքան մի ուժեղ գորա-
բաժին շարժվեց դէպի արևելք Ենտայից,
Կուրօվի առաջն առնելու համար, որ յարձա-
կում գործեց հոսանք դիրքերի վրա, բայց յետ
մղվեց և դուրս բերեց իր դիրքերից: Այժմ եր-
կու կողմում երկաթուղիները կենտրոնացրին թնդ-
անոթային սարսափելի կրակ: Երկուցեան
ռուսներին օգնութեան հասան թնդանոթաձիգ
գործաւորներ, որոնք սկսեցին ուղղակի եր-
կաթուղիին աջակցել: Կուրօվին սկսեց
շարժել իր գործերը յարձակում գործելու
նպատակով և հասավ մի կէտի, որ 12 մղոն
հեռու է երկաթուղուց: Գծից Ենտայի մօտ,
սակայն ստիպված էր յետ նահանջել դէպի իր
նախկին դիրքերը: Օգոստոսի 21-ի կուրը շա-
րունակվում էր:

ԵԱՆԳՆԱՅ, Օգոստոսի 23-ին: (Բէյութէր գոր-
ծակալութիւն): «Ասիլդի» և «Գրօգոյի»
վրա եղած գործերը կը մնան Չինաստանում և
կը գետնի վրէժն բաց նահանգիստներում, ուր
կան հոսանքան հիւպատոսարաններ, այն է,
Զիֆուում, Տեանձինում, Սանկուում, Շանգհայ-
ում և Ֆուչոնում:

Նմադիր՝ ԱԼԵԿՍԱՆԴՐ ԲԱՆԻՍԹԱՐ
Հրատարակչին՝ ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՏԱՆԱՅ ՄԵԼԻՔԱՆԱՅԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վարժարան-Պանիօն
Յ. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ

(XIII-րդ տարին իր գոյութեան Կիփլիս, Երևան, Բաղրատեյական լ. ճ. № 32).

Ընդունում են նորիկ աշակերտներ՝ իբրև
երթնակներ և գիշերօթիկներ բոլոր պետական
միջնակարգ դպրոցները մտնելու համար: Ըն-
դունվում են նաև բոլոր գիմնազիաների, վա-
ճառականական, բնական և ուրիշ կառա-
վարական դպրոցների ստորին դասարանների
աշակերտները իրանց տուած դասերը վերա-
կրկնելով հանդերձ (с повторением): Վարժա-
րանում աւանդվում են նաև բացի միւս առար-
կաներից՝ կրօն, հայոց լեզու, ֆրանսիական և
գերմանական լեզուներ հմուտ ուսուցիչների
ղեկավարութեամբ, իսկ առաջի նախալրթա-
րանում կրօնին կից նաև բարոյախօսութիւն
մանուկների համար: Վարձը չափաւոր է: Ու-
սումը սկսվում է սեպտեմբերի 1-ից:

Վարժարանի կառավարչ՝
2—5 Թ. Ղարագեօգեան

ԿԱՐՄԵԼԻՏԵՐԻ ԶՈՒՐ
BOYER (Բուլայէ)
Eau des Carmes, 6, rue de l'Abbaye, Paris.
Հաճելի համով, ջրային հիւանդութիւն-
ների ժամանակ ներգործում է հանգստա-
ցուցիչ կերպով: Մի քանի կաթիլ շաքա-
րի կտորի վրա կամ սուրճի գլխիկում կա-
թեցրած՝ հացից յետոյ ընդունելը ներ-
գործում է գրգռիչ կերպով ստամոքսի
ատոնիայի դէպքում: Ծախվում է բոլոր
դեղատոմսերում:
Գլխաւոր պահեստատեղին Դիդաւան
Ապրանքների վաճառման Կովկասեան
Ընկերութեան մէջ Թիֆլիսում, Բաղրատ
և Բաթումում, կայ և բոլոր լաւ դեղա-
տոմսերում: 25 1—2

ՊՈՆՏՈՍ
Գրախանութիւն, Անապայում, գնում և վա-
ճառում են ամեն տեսակ գրքեր և պատկերներ:
Դիմել՝ Анапа, «Понтосъ», М. Шводу. 3—4

ՀԵՐՄԵՍ
ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՏՊԱՐԱՆԸ
Տեղափոխվել է իր հին բնակարանից—(Միքայելեան փող. № 81) նոր շինութիւնը՝
Մադաքեան փող. № 15 Ալեքսանդրեան այգու հանդէպ
Եւ կապեր հաստատելով եւրոպական նշանաւոր ֆիրմաների հետ, շարունակաբար ստա-
նում է արտասահմանից տպարանական տեխնիկայի նորութիւններ, (թղթեր, ներկեր,
գրգռեր և այլն) որոնք և հնարաւորութիւն են տալիս չափաւոր գնեցող
ՄԱՔՈՒՐ ԵՒ ԶԳԵՂ ՏՊԱՐԱՆԻ
Ամեն տեսակ գրքեր, գունատիպ պատկերներ, հաշիւներ, բլանկներ, տոմ-
սեր և այլն:
Օսար Բաղաւմբից դիմել՝ Тифлисъ, типография «Гермесъ». արտասահմանից՝
Tiflis Imprimerie «Hermes». 5—10

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Ընկերութեան ԳՐԱՄՄՕՖՈՆ Ռուսաստանում
Թիֆլիս, Գոյովինսկի պրօսպեկտ, Արեւմտեան տուն № 7
Հասցեն հեռագրով թիֆլիս
ԳՐԱՄՄՕԿՈՄՊԱՆԻԱ
Հեռախօս № 69.
ՇԱՏ ՏԵՍԱԿ՝ ամենա-
կատարեալագործված սա-
լ ծնական և կոնցերտային
գրամոֆօններ:
Մեծ բանակութեամբ՝ անշուշտ պատկերականների յայտնի և նշանաւոր երգիչների, ինչպէս
են. Ռուսաց, վրաց, հայոց, քրդական, պարսկական, ճանկական, լեհական, ֆրան-
սիական, անգլիական, իսպանական, գերմանական և ուրիշները:
ՊԱՏՄԱՆԿԱՆԵՐ ԸՆԴՐԵԼԻՍ խնդրում ենք ուղարկելու դարձնէր մեր ֆաբրի-
կայի գործարան «ԳՐՈՂ ԿՐԵՇՏԱԿ» առանց մեր գործարանի ընդունել՝ ինչպէս
կեղծված:
Պահեստում կայ արհեստանոց, որտեղ հարկաւոր եղած ժամանակ կարելի
է նորոգել փչացած ապարատները: Գրամոֆօնի ուղիղ բանելու համար տրվում է ե-
րաշխատարկան թերթ 3 տարի ժամանակով:
Ուղարկելով ապրանքների արկղը և այլ ծախսը գնողներին հաղելին:
ՈՒՂԱՐԿԵԼԸ ապարատների երկաթուղու բոլոր կայարանները, եւրոպական Ռուսաս-
տանի սահմաններում (ամառը ի հաշիւ առած ջրային ճանապարհների նաւահանգիստ-
ները) կատարվում է պահեստի հաշիւին:
Պատուով ուղարկած ապրանքների ծախսը, պահեստը ընդունում է իրան հաշիւին կէտը:
Ածած պլաստիկ կանեւը միայն մեր բաց թողած դրոշմով «Գրոգ-հրեշտակ»
յետ է ընդունվում ներքոյ յիշեալ գնեցող:
Փոքր սովորական } հատը — 50 կօպ. Մեծ սովորական } հատը 1 ու. 00 կօպ.
» էկտորայ } հատը 1 ու. 30 կօպ. Տամանիօ » 1 ու. — »
Գիգանտ սովորական } հատը 1 ու. 30 կօպ.
» էկտորայ }
Կիրակի օրերը խանութը փակ է. հասարակ օրերը բաց 8 1/2 առաւ. մինչև ժամ
9-ը երեկոյեան:
Պահանջեցէ պահեցեալագր պրեյսկոմպոզիցիոն:
Գումարով գնողներին ուղարկվում է Օպէրի պրեյսկոմպոզիցիոնները պահանջելուն
պէս: Պահանջեցէ լիակատար լիբրետո գրամոֆօնի համար, գինը 1 ու. 50 կօպ. 47—50